ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 25 մարտի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով Հրաչյա Հարությունյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Հրաչյա Հարությունյանը 10.03.2016թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով ՀՀ Սահմանադրության 42, 79 և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի՝ «հրապարակային» դրույթը՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված այն մեկնաբանությամբ, որով պաշտպանությունից դուրս է դնում «ահազանգողներին» (whistleblower), կամ բացահայտել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի՝ «հրապարակային» դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը:

Դիմողը գտնում է, որ իր նկատմամբ կիրառված՝ վիճարկվող դրույթները չեն ապահովում իրավական որոշակիության, պետության կողմից մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման և պաշտպանության սկզբունքները, հետևաբար՝ չեն պաշտպանվել դիմողի՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները:

Ըստ դիմողի՝ սահմանադրաիրավական վեճի առարկա «հրապարակային» դրույթն ստացել է այնպիսի անորոշ և հակասական բովանդակություն, որ հնարավոր չէ հստակ հետևություն անել, թե «մեկ երրորդ անձին» «հաղորդակից» դարձնել հասկացությունը գործնականում ինչպիսի դրսևորումներ կարող է ունենալ:

Դիմողը կարծում է, որ նման պայմաններում պաշտպանությունից զրկվում են «ահազանգողները», ովքեր իրականացնում են կարևորագույն գործառույթ ժողովրդավարական հասարակությունում:

Միաժամանակ, դիմողը ներկայացրել է միջնորդություն պետական տուրքի վճարումից իրեն ազատելու վերաբերյալ:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ դիմումի քննության ընդունումը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

այսպես, դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիմումը ենթակա է մերժման, քանի որ նույնաբովանդակ հարցի և վիճարկվող դրույթի վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշումը: Նշված որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշումներ է ներկայացրել խնդրո առարկա հոդվածի «հրապարակային» եզրույթի բովանդակության վերաբերյալ՝ նշելով, մասնավորապես, որ. «.... յուրաքանչյուր գործով արարքի հրապարակայնացման փաստի, հանգամանքների պարզումը իրավակիրառական պրակտիկայի խնդիր է...», հավելելով, որ. «... վեճի առարկա հոդվածի իրավակարգավորումը վերաբերում է միայն հանրության առջև, **առնվազն երրորդ անձի ներկայությամբ** անձին հանիրավի անվանարկելու հետևանքների հաղթահարմանը...»: Այսինքն՝ ՀՀ սահմանադրական դատարանը,

բացահայտելով «հրապարակային» եզրույթի բովանդակությունը, ընդգծել է, որ առնվազն երրորդ անձի ներկայությունն արդեն բավարար է փաստելու համար վիրավորանքի, զրպարտության հրապարակային բնույթը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Հրաչյա Հարությունյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

25 մարտի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/2-9